

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

11 նոյեմբերի 2021թ.
ք. Երևան

N 244-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 151-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Նախապատվության քվեակարգով քվեարկության արդյունքով Աննա Հովհաննեսի Երեմյանին և Ալբերտ Սամսոնի Ուլիխանյանին նշանակել թիվ 22 տարածքային ընտրական հանձնաժողովի անդամներ:

2. Նախապատվության քվեակարգով քվեարկության արդյունքով Արմեն Մացակի Ավետյանին նշանակել թիվ 23 տարածքային ընտրական հանձնաժողովի անդամ:

3. Նախապատվության քվեակարգով քվեարկության արդյունքով Հմայակ Գնունիի Այվազյանին նշանակել թիվ 24 տարածքային ընտրական հանձնաժողովի անդամ:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 16-ի «Տարածքային ընտրական հանձնաժողովների անդամներ նշանակելու մասին» թիվ 151-Ա որոշման.

- 1) 22-րդ կետը լրացնել «Երեմյան Աննա Հովհաննեսի» և «Ուլիխանյան Ալբերտ Սամսոնի» բառերով,
- 2) 23-րդ կետը լրացնել «Ավետյան Արմեն Մացակի» բառերով,
- 3) 24-րդ կետը լրացնել «Այվազյան Հմայակ Գնունիի» բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. Մուկուչյան